| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 6 | Հունիս | 2019 թ. | | Բ | 8134514079 |
| [4] Առաքման ամսաթիվ | | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| 6 | Հունիս | 2019 թ. | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |

| | Պայմանագիր | |
|---|---|---|
| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Արտադրանք, ապրանք առաքող անձի**

| | | | |
|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 | | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 | | |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | | |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ | N 1570015001210100 | |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | | |

**Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի**

| | | | |
|---|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | | |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 | |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Որից՝ ակցիզային հարկ | Որից՝ բնապ. վճար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 33100219բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

06/06/2019 09:38:49

# Ո Ր Ո Շ Ու Մ
## համալիր դատահոգեբանական և ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

19 փետրվարի, 2019 թ. ք. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Հ. Մարգարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 33100219 քրեական գործի նյութերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի փետրվարի 12-ին Լոռու մարզի դատախազությունից ստացված «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ստացվել, որ գործով չպարզված ժամանակ և վայրում տասնութ տարին լրացած ոմն Համոն տասներկու տարին չլրացած, 2011 թվականի մայիսի 25-ին ծնված Միլենա Արտավազդյանի նկատմամբ պարբերաբար կատարել է անառակաբարո գործողություններ:

Դեպքի առթիվ 2019 թվականի փետրվարի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 33100219 քրեական գործը և Միլենա Արտավազդյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննությամբ պարզվել է, որ դեպքը տեղի է ունեցել 2017 թվականի մայիսից 2018 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում:

Նկատի ունենալով, որ Միլենա Արտավազդյանի հոգեկան վիճակի հետ կապված և գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության և դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, 243-246-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով նշանակել համալիր դատահոգեբանական և ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել և «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերությանը և «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝ վերջինիս փորձագետներին նշանակելով որպես սույն փորձաքննության առաջատար կատարողներ:

2. Փորձաքննության ներկայացնել անչափահաս տուժող Միլենա Լևոնի Արտավազդյանին, իսկ փորձաքննության ընթացքում՝ նաև քրեական գործի նյութերը և փորձաքննության լիարժեքության ապահովման համար նշանակություն ունեցող այլ նյութեր:

3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

- ինչպե՞ս է ընթացել անչափահաս տուժող Միլենա Արտավազդյանի տարիքային զարգացումը, ներկայումս նրա ինտելեկտը համապատասխանո՞ւմ է տարիքին, կա՞ արդյոք զարգացման ուշացում,
- կա՞ն արդյոք հոգեկան շեղումներ, որոնք ազդել են անչափահաս Միլենա Արտավազդյանի նորմալ զարգացման վրա, եթե այո, ապա ինչպե՞ս են արտահայտվել դրանք,

• անչափահաս տուժող Միլենա Արտավազդյանին բնորո՞շ են այնպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ (այդ թվում՝ տարիքային զարգացման աստիճանը), որոնք կարող էին էապես ազդել քննարկվող իրավիճակում նրա վարքի վրա,

• հաշվի առնելով անչափահաս տուժող Միլենա Արտավազդյանի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ և անձնային զարգացման մակարդակն ու քննարկվող իրավիճակի բովանդակությունը՝ կարո՞ղ էր արդյոք նա հասկանալ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը,

• հաշվի առնելով անչափահաս տուժող Միլենա Արտավազդյանի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները և քննարկվող իրավիճակի բովանդակությունը՝ կարո՞ղ էր, արդյոք, նա դիմադրություն ցույց տալ,

• ելնելով անչափահաս տուժող Միլենա Արտավազդյանի տարիքային, անհատական-հոգեբանական և այլ առանձնահատկություններից՝ վերջինս կարո՞ղ էր արդյոք ճիշտ ընկալել և վերարտադրել իր նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի գործողությունները, դեպք(եր)ի վերաբերյալ տալ ճշմարիտ և հավաստի ցուցմունքներ,

• անչափահաս տուժող Միլենա Արտավազդյանը նախկինում, դեպք(եր)ի ժամանակ և ներկայումս տառապո՞ւմ կամ տառապե՞լ է արդյոք որևէ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, ունեցել կամ ունի՞ տկարամտություն կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակ, թե՞ ոչ,

• եթե անչափահաս տուժող Միլենա Արտավազդյանը դեպքի տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ գտնվել է ժամանակավոր հոգեկան խանգարման մեջ, ապա հիվանդությունը կամ վիճակը զրկե՞լ է արդյոք նրան իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթը գիտակցելու և դիմադրություն ցույց տալու ընդունակությունից:

*Փորձագետներին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:*

4. Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**ավագ քննիչ՝** **Հ. Մարգարյան**